ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար-համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» սեպտեմբերի 2018թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննես Ստեփանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Էլլադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի պատասխանատու,

Կարեն Մելքոնյան (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ արձանագրված անհամապատասխանությունը «Ստարտկոպի» ՍՊԸ-ի կողմից շտկելու վերաբերյալ.

«Ստարտկոպի» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

Ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց, որ «Նորմա պլյուս» և «Ստարտկոպի» ՍՊԸ-ների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ «Նորմա պլյուս» և «Ստարտկոպի» ՍՊԸ-ների մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և
-3, 4, 6, 9, 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել«Նորմա պլյուս» ՍՊԸ-ին,
-7, 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել«Ստարտկոպի» ՍՊԸ-ին,

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ Հովհաննես Ստեփանյան

Գրիգոր Գաբրիելյան

Էլլադա Արզաքանյան

Քարտուղար՝ Կարեն Մելքոնյան

Օֆելյա Ասատրյան